



Գ. ՇԻՐՄԱՋԱՆՅԱՆ

ԷՋԵՐ ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ ԸՆԴԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Հուշեր ձեմարանի հիմնադրության 90-ամյակի առթիվ)

Ակնհայտ է էջմիածնի Գևորգյան ձեմարանի կատարած մեծ դերը հայ մշակույթի և հայագիտության զարգացման գործում:

Գևորգյան ձեմարանը հիմնվել է 1874 թվականին և փակվել է հայ ժողովրդի մեծ ողբերգության տարին, 1915—1916 թվականին, երբ էջմիածին էին եկել շուրջ 60 000 արևմտահայ գաղթականներ Վասպուրականից և Այաշկերտից:

1964 թվականին լրանում է Գևորգյան ձեմարանի հիմնադրության 90-ամյակը:

Մինչև այսօր դեռ չի գրվել Գևորգյան ձեմարանի ամբողջական պատմությունը, չնայած նրա մոտ 40 տարվա գոյության և կատարած շնորհակալ գործունեության:

Էջմիածնի Գևորգյան ձեմարանի պատմությունը, որպես հայ մշակույթի կարևոր օղակներից մեկի, շատ կարևոր է և անհրաժեշտ: Այդ աշխատանքը հաջող կերպով կարող են կատարել Գևորգյան ձեմարանի նախկին սաները և կամ հայ մշակույթի ու դպրոցների պատմությանը զբաղվող մեր մասնագետները:

Ձեմարանի հիմնադրության 90-ամյակի առթիվ, հրապարակ ենք հանում մի քանի հետաքրքրական լուսանկարներ ձեմարանի անցյալից¹: Այդ նկարները ունեն 60-ամյա

վաղեմիություն, նկարված են 1902—1904 թվականներին:


Այդ տարիները Գևորգյան ձեմարանի բարգավաճման լավագույն տարիներն էին, միաժամանակ և ծանր տարիներ՝ հայ եկեղեցական գույքերի բռնագրավման և հայ դպրոցների փակման տարիներ:

Այդ տարիներին Գևորգյան ձեմարանի ուսուցչական կազմի մեջ էին ականավոր բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանը, որն ավարտելով Մոսկվայի Լազարյան ձեմարանը և Մոսկվայի համալսարանի բանասիրական ֆակուլտետը, միաժամանակ համարվում էր լավագույն ուսագետը ձեմարանում և երկար տարիներ վարում էր ուսաց լեզվի ու գրականության ուսուցչի պաշտոնը:

Նույն տարիներին Գևորգյան ձեմարանում և հետագա տարիներին Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, ուսաց լեզու էր դասավանդում բազմավաստակ մանկավարժ, հետագայում Սովետական Հայաստանի լուսժողովատի երկարամյա աշխատող Սեդրակ Ավետյանը (1873—1949): Հովհաննիսյանը և Ավետյանը ապրում էին էջմիածնում իրենց ընտանիքներով, ուստի մեծ մասամբ նրանց մոտ էին հավաքվում ձեմարանի մանկավարժները իրենց ազատ և հասգստի ժամերին:

Ձեմարանի դասախոսները, դարձան և ամառվա ամիսներին, իրենց լավագույն ժամերն էին անց կացնում նաև Ս. Հովհաննիսյանի տաճարի մոտակայքում գտնվող Ղուի այգում:

¹ Այդ լուսանկարները մեզ տրամադրել են Վ. և Ս. Ավետյանները, որոնց հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:



Գևորգյան Ճեմարանը

Այստեղ զետեղված հազվագյուտ լուսանկարները պատմում են այդ սրտագին հավաքույթներից մի-երկուսի մասին:

Առաջին խմբանկարը լուսանկարված է 1902 թվականի ամռանը: Խմբանկարի կենտրոնում նստած է Հովհաննես Հովհաննիսյանը իր աղջիկների հետ: Առաջին կարգում, աջից առաջինը, նստած է Սեդրակ Ավետյանը՝ շրջապատված իր փոքրիկներով: Նրա աջ կողմում նստած է Գարեգին վարդապետ Հովսեփյանը՝ հայ մշակույթի բազմավաստակ գործիչը, հետագայում Կիլիկիայի կաթողիկոս: Բացի նրա գիտական աշխատանքներից, ակնհայտ է նրա մեծ դերը որպես Նդրաշյուական օգնության հանձնաժողովի նախագահի 1915—1916 թվականներին, հայ ժողովրդի պատմության ողբերգական տարիներին: Նրա անունը անմոռաց է մնալու, որպես քսաներորդ դարի Նոր Ավարայրի՝ 1918 թվականի մայիսի 22—24-ի Սարդարաբադի ճակատամարտի Նոր Ղևոնդ երեցի: Գարեգին վարդապետը երկար տարիներ աշխատել է որպես մանկավարժ և ապա որպես տեսուչ Գևորգյան Ճեմարանում (1913—1916): Նշենք, որ նրա տեսչության տարիներին, Գևորգյան Ճեմարանում է սովորել հայ ժողովրդի պանծալի ղավակ Անաստաս Միկոյանը:

Գևորգյան Ճեմարանը

Վերջին կարգի ձախ կողմի եղբից վերևում երևում է Ճեմարանի բազմավաստակ մանկավարժ, ակնաւոր գիտնական և հայագետ Ստեփան Կանայանի (1870—1936) բարձր հասակը՝ համակրելի դեմքով: Նրա կողքին են կանգնած Նինա Ավետյանը և Սիրանուշ Հովհաննիսյանը (հետագայում Տեր-Մինասյան): Այդ կարգում երրորդը նկատում ենք Ճեմարանի երիտասարդ ուսուցիչ Միսակ Խոստիկյանին: Շարքի կենտրոնում գտնվում է իր բարձր հասակով, գեղեցիկ դեմքով, Գևորգյան Ճեմարանի այն տարիների աստվածաբանության ուսուցիչ և տեսուչ, ակադեմիկոս գիտնական, հրապարակախոս Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանը (հետագայում եպիսկոպոս): Տեր-Մկրտչյանը ծնվել է 1866 թվականին պատմական Գողթն գավառի Յղնա գյուղում: Նա 1888 թվականին ավարտել է Գևորգյան Ճեմարանի լրիվ դասընթացը և 1889 թվականին մեկնել է Գերմանիա՝ սովորելու Լայպցիգի, Հալլեի և Բեռլինի համալսարաններում: Վերադառնալով Գերմանիայից, Տեր-Մկրտչյանը նշանակվել է Ճեմարանի ուսուցիչ, միաժամանակ տեսչի օգ-



Գևորգյան Ճեմարանի մի խումբ դասախոսներ (1902 թ.)

նական և ապա տեսուչ, այս պաշտոնում մնալով մինչև 1902 թվականի վերջը: 1966 թվականին լրանում է նրա ծննդյան 100-ամյակը: Տեր-Մկրտչյանը վախճանվեց իր ուժերի ծաղկման հասակում, 1915 թվականի նոյեմբերի 19-ին (հին տոմարով):

Խմբակարգում Կարապետ Տեր-Մկրտչյանի աջ կողմը կանգնած է այն տարիների Գևորգյան Ճեմարանի տեսչի օգնական Հուսիկ վարդապետ Զոհրապյանը, հետագայում Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ: Չախ կողմում կանգնած են Ճեմարանավարտ, Ճեմարանի երկարամյա դաստիարակ Հովսեփ Գրիգորյանը և դասատու Ավետիք Տեր-Պողոսյանը, հետագայում Սովետական Հայաստանի պետական համալսարանի պրոֆեսոր:

Հետաքրքիր դիրքով կանգնած է անմահ Կոմիտաս վարդապետը:

1881 թվականին Թուրքիայի Կուտինա քաղաքից էջմիածին է բերվում 12-ամյա որբ Սողոմոն Սողոմոնյանը՝ սովորելու Գևորգյան Ճեմարանում:

Հայերեն չիմացող Սողոմոնի համար բնականաբար դժվար էին դպրոցական առաջին տարիները: Բայց շնորհիվ իր մեծ ընդունակությունների և լավ ձայնի ու լսողության, նա իր վրա է հրավիրում այն տարիների երգեցողության ուսուցիչ Քրիստափոր Կարա-Մուրզայի ուշադրությունը: 1893 թվականին, հրիմյան Հայրիկի կաթողիկոսության օրոք, ավարտելով Ճեմարանը, նա վարդապետ է ձեռնադրվում և նույն թվականին նշանակվում Ճեմարանի երգեցողության դասատու: Սակայն հարկավոր էր շարունակել ուսումը, և Կոմիտաս վարդապետը ուղարկվում է Գերմանիա՝ երաժշտական բարձրագույն կրթություն ստանալու համար: Դեռ ուսանող եղա՛յ տարիներին, Գերմանիայի մի շարք քաղաքներում և Փարիզում նա դասախոսություններ է կարդում հայ ժողովրդական և եկեղեցական երաժշտության մասին: Կոմիտաս վարդապետը 1899 թվականին վերադառնում է էջմիածին և անցնում է Գևորգյան Ճեմարանում երաժշտության դասատուի պաշտոնին, որը վարում է երկար տարիներ, համարյա ան-



Գևորգյան Ճեմարանի մի խումբ դասախոսներ (1903 թ.)

ընդհատ մինչև 1910 թվականը: Այդ տարիներում նա Ճեմարանի աշակերտներից կազմակերպում է երգեցիկ խումբ և իրեն հատուկ հուանդով հավաքում է ժողովրդական երգեր, զբաղվելով նաև պատարագի և այլ հոգևոր երգերի ձայնագրությամբ:

Ես երջանկությունն եմ ունեցել Կոմիտաս վարդապետի կողմից կազմակերպված ու ղեկավարված խումբը լսելու առաջին անգամ 1903 թվականի հունվարի 5-ին: Անցել է 60 տարի, բայց դեռ այսօր էլ իմ հուշերի մեջ մնում է այն ուժեղ, աջնջելի տպավորությունը, որ թողել է այդ երգեցողությունն ինձ վրա:

Կոմիտաս վարդապետը ապրում էր մայրավանքի հին խուցերից մեկում, որոնք կառուցված էին վանքի բակի հյուսիսային պատի ուղղությամբ: Խուցը շատ համեստ էր կահավորված. դրված էր մի դաշնամուր, աշխատասեղան, մահճակալ: Նույնիսկ ձմեռվա ցուրտ օրերին Կոմիտասը քնում էր բաց պատուհանով: Հայրս շատ մոտ էր Կոմիտասին, և ամեն անգամ գալով էջմիածին, լինում էր նրա մոտ: Կոմիտասը կատակասեր էր և հյուրերնկալ: Ըստ էջմիածնի սովորության, նա հատուկ վարպետությամբ պատրաստում էր սև սուրճ ու քաշովի:

Վերջին անգամ Կոմիտաս վարդապետին հանդիպեցի 1913 թվականի հունիսի սկզբին:

Իրեն, երբ մի քանի տարվա բացակայությունից հետո եկել էր էջմիածին, որտեղ կարճ ժամանակ մնալուց հետո, նորից մեկնեց: Այդպիսի վերադարձը, կարճատև մնալը և շուտ հեռանալը բացատրվում են տարբեր ձևով: Ըստ իր ակնարկի, նա սպասում էր, որ վերադառնալով էջմիածին՝ կձեռնադրվի եպիսկոպոս, սակայն Գևորգ Ե կաթողիկոսից նա գտավ սառն ընդունելություն, որի համար և հեռացավ էջմիածնից: Նրա էջմիածնից հեռանալու օրը, նույն գնացքով և նույն կուպեում, ես էլ էի մեկնում: էջմիածնից մինչև Սողանլուղ կայարանը, որտեղ այդ ժամանակ ծառայում էր հայրս՝ Վասիլ Շիրմազանը, ճանապարհի մեծագույն մասն անցկացրինք սրտագին խոսակցություններով: Ես այն տարիներին արդեն 21 տարեկան ուսանող էի և շատ էի տարված հայ ժողովրդին ծառայելու դադափարով:

Կոմիտաս վարդապետը շատ էր ոգևորված Կոստանդնուպոլսի իր գործունեությամբ և համոզված էր ինձ գնալ Կոստանդնուպոլիս և այնտեղ ծառայել հայ ժողովրդին: Նա այդ միտքը շատ ուժեղ էր արտահայտում: Բերում էր մի շարք տվյալներ դպրոցների թվի, գրական և հասարակական կյանքի զարգացման մասին Կոստանդնուպոլսում, համեմատելով այն Թիֆլիսի և էջմիածնի հետ, որոնք այն տարիներին արևելահայերի



Գևորգյան Ճեմարանի մի խումբ դասախոսներ (1904 թ.)

մշակութային և հասարակական կյանքի կենտրոններ էին: Այն տարիների Երևանը չէր կարելի համեմատել նույնիսկ էջմիածնի հետ, էջմիածնում, բացի բարձրագույն կրթություն ունեցող գիտական աշխատանքով զբաղվող միաբաններից՝ Կարապետ և Մեսրոպ Կալուկոսյաններից, Գարեգին Հովսեփյան վարդապետից, ակնավոր բանասեր Գալուստ Տեր-Մկրտչյանից (Միսրան) և ուրիշներից, աշխատում էին նաև մեծ թվով Գևորգյան Ճեմարանի հայազետ դասատուներ:

Կեսօրից հետո մեր գնացքը հասավ Սողանլուղ կայարանը: Շատ հուզիչ էր Կոմիտաս վարդապետի և հորս հանդիպումը: Արտասովորով նրանք գրկախառնվեցին: Հայրս երկար համոզում էր նրան իջնել գնացքից, մնալ մեզ

մոտ հյուր, բայց ապարդյուն: Կոմիտասը պատճառաբանեց, որ կուշանա շոգենավից, որը Բաթումից դեպի Կոստանդնուպոլիս էր գնում շաբաթը մեկ անգամ:

Կոմիտասը գնաց դեպի ողբերգություն: Ո՞վ է իմանում, ի՞նչպես կդասավորվեր անմահ Կոմիտասի կյանքը, ձթե նա մնար մեզ մոտ մի քանի օրով հյուր...:

Կոմիտաս վարդապետի կյանքն ու գործունեությունը անխզելի թելերով կապված էին Գևորգյան Ճեմարանի հետ: Կարելի չէ Գևորգյան Ճեմարանի պատմությունը գրի առնել առանց այն շաղկապելու Սողոմոն Սողոմոնյան—Կոմիտաս վարդապետի կյանքի ու գործունեության հետ:

Չնայած, որ ներկայումս էջմիածնում վերջին վանական վերանորոգությանց ժամանակ քանդված է այն խուցը, որտեղ տարիների ընթացքում ապրել է ու ստեղծագործել Կոմիտաս վարդապետը, գտնում ենք, որ անհրաժեշտ է այնտեղ տեղադրել մի հուշատախտակ: Այդպիսի հուշատախտակ անհրաժեշտ է տեղադրել նաև նախկին Ճեմարանի, այժմ էջմիածնի միջնակարգ դպրոցի պատի վրա, որտեղ սովորել և երկար տարիներ դասավանդել է Կոմիտասը:

Շարունակենք խմբանկարի դիտումը: Կոմիտասի կողքին կանգնած է Ճեմարանի իր ավագ և մտերիմ ընկերը, հայ ակնանավոր աղագրավետ և հայագետ Մանուկ Աբեղյանը, որը եղել է Ճեմարանի հայ հին ու նոր գրականության դասատուն:

Կոմիտաս վարդապետի և Մանուկ Աբեղյանի միջև իր բարձր հասակով, երկար ու սև, գլխարկից դուրս թափվող մազերով կանգնած է հայ գեղարվեստի ու մշակույթի ուսումնասիրման նվիրված, «Գեղարվեստ» հանդեսի խմբագիր Գարեգին Զիվանի Լեոնյանը (1872—1947): Նա 1901 թվականի աշնանը, ավարտելով իր ուսումը Մոսկվայում և Պետերբուրգում (Լենինգրադում), հրավիրվում է էջմիածնի Գեորգյան Ճեմարանը, որտեղ և մնում է մինչև 1906 թվականը: Ճեմարանի լսարանական բաժնում դասավանդում է գեղարվեստի տեսություն, իսկ դասարանական բաժնում՝ նկարչություն: Այդ տարիներին Գ. Լեոնյանը մեծ աշխատանք է տանում էջմիածնի ձեռագրերի ուսումնասիրման գործում: 1905 թվականին Կոմիտասը և Գ. Լեոնյանը ծրագրում էին հայերեն մի գրական-գեղարվեստական պատկերազարդ հանդես հրատարակել: Ծրագրված հանդեսը՝ «Գեղարվեստ»-ը, սկսել է լույս տեսնել միայն 1908 թվականին:

Այս երկրորդ խմբանկարը ևս հանված է 1903 թվականին, այգում: Նկարում նույն ծանոթ դեմքերն են, Հովհաննես Հովհաննիսյանի գլխավորությամբ: Ձախից երկրորդը, նստած, տարված իր մտքերով և խոհերով, հենված աջ ձեռքի վրա, Կոմիտաս վարդապետն է: Դեպի աջ նստած են Ճեմարանի դասատուները՝ Ասլան Շահնազարյանը, ականավոր պատմաբան Հակոբ Մանանդյանը, Գարեգին Լեոնյանը, հետևի շարքում կանգնած են Քոչարյանը, պատմության և աշխարհագրության դասատու Մկրտիչ Ղազարյանը, գինու շիշը ձեռքին կանգնել է Ստեփան Կանայանը, կողքին՝ Տաճատ սարկավազը, ապա Հովհաննես Հովհաննիսյանը: Առաջին շարքում է Մամբրե վարդապետ Մելիք-Աղամյանը: Սեղանի վրա է գրամաֆոնը, որ դասակարգում շատ էր տարածված: Գրամաֆոնի առաջ նստած է մաթեմատիկայի դասատու Կարապետ Տերյանը:

Նրբորդ խմբանկարը ներկայացնում է Գեորգյան Ճեմարանի 1902—1904 և հետագա տարիների մի խումբ դասատուներ: Ձախից աջ կանգնել են Մկրտիչ Տեր-Սահակյանը, Քրիստափոր (Խաչատուր) Տեր-Մկրտչյանը (Կարապետ եպիսկոպոսի կրտսեր եղբայրը), Գեորգ Աթոնյանը, Հովհաննես Թադեոսյանը և Հայկ Հովակիմյանը: Նստած են Մեսրոպ Աբովյանը և Հովսեփ Գրիգորյանը:

Այս տողերը թող լինեն համեստ ու կարճ, բայց կարծում եմ, որ Ճեմարանցիները, որոնք ունեն հարուստ կամ սակավ նյութեր, գրի կառնեն իրենց հուշերը և այդպիսով կստեղծվի մի հիմք, որով մոտիկ ապագայում հնարավոր կլինի ձեռնարկել և իրագործել հայ հասարակական և մտավոր կյանքի զարգացման պատմության համար այնքան կարևոր դեր կատարած Գեորգյան Ճեմարանի պատմությունը:

